

Գ/ ՀԱՅ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ խոսում է հայ լեզվով,
Եվ կամ՝ որի մականունը հանգում էյանմասնիկով,
Որ ուտում է ամենայն օր ճաշին տոլմա ու փըլլավ,
Կամ՝ պարծանոք միշտ հագնում է հայի գրդակ ու հալավ:

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ գընում է Հայի ժամ,
Ու տարենը հաղորդվում է խիստ սակավից՝ չորս անգամ,
Որ կյանքումը պաս չի կերել, ծոմ էլ պահում է նույնպես,
Հորանջելիս խաչ է կընքում՝ բաց բերանն ու երես:

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ տեսնելիս տերտերին
«Օրհնյա ի տեր» պատրաստ ունի ամեն թուրքի իր բերնին,
Որի համար մեծ ամոթ է, նաև մեղք է մահացու,
Թե Զատիկի թաթախմանը չուտե թերխաշ կարմիր ձու:

Չէ՛, սիրելիս, ազգությունը չէ արտաքին արարմունք,
Հայ ծընելըդ անգամ չի տալ քեզ հայության իրավունք,
Ով է կամյանմականունիդ վերջի վանկի մասնիկը,
Կարմիր ձվով կամ թե անձու կատարում ես զատիկը:

Քալլա-փաչա կամ թե բորշ է ամեն օրվա կերածըդ,
Սեռտուկ, պայլտո կամ թե չուխա է վըրայի հագածըդ
Ողջը մին է. ծեսով չես տալ ազգիդ վընաս կամ օգուտ,
Տեղը մընա ազգությունը, այդ նաև վարձ չէ՛ հոգուդ:

Թե դու հայ ես՝ հայությունդ պիտի հարգես անպատճառ,
Հայաստանը պիտի լինի հուսո աստղը քեզ համար.
Օտարինը դու մի՛ ատիլ, մի՛ էլ սիրիլ կուրորեն,
Բայց քու Հայի օգուտները միշտ վեր դասե ամենեն:

Արվեստ, ուսում, շըքեղարվեստ տարածե՛ հայ ազգի մեջ,
Բայց բըռնությամբ միշտ հեռացուր նորա մեջեն կրոնի վեճ.
Քեզ ի՛նչ շահ է, թե դու կասես՝ հոգին բըխել է Հորից,

Կամ թե Որդին հոգվով սրբով անսերմ ծընունդ է Մորից...

Թող, սիրելի, այդ խընդիրքը, աչքըդ դարձնուր դեպ հարավ,
Բյուր-բյուր հոգիք դու կըտեսնես կորած դորա պատճառով,
Բայց մինչ այսօր այդ խընդիրքը մընացել է անվըճիռ,
Թույլ խելքովըդ աշխատում ես քակել անքակ այդ կընձիռ:

Միրեն ազգըդ ո՛չ լոկ խոսքով, սիրեն ինչպես քու անձը,
Նորա օգտին, թե պետք լինի, զոհե՛ բոլոր քու գանձը.
Մի՛ խընայիլ կյանքըդ անգամ, արյունըդ բեր նորան զոհ
Ո՛չ այն հուսով, որ քու ազգը իսկույն լինի քեզնից գոհ:

Իստակ սերը չի՛ պահանջում ամենևին տըրիտուր,
Թե տվածը հետ առնվի՝ դորան կասեն առուտուր.
Բայց վայ՛ նոցա, որք անըզգա են յուր ազգի վիճակին,
Հազար անեծք նոցա վերա, երնեկ շան պես սատակին:

Թե դու հայ ես՝ գիտես արդյոք՝ ո՛վ էր ազգիդ նախահայր,
Ո՞րտեղ, որ կողմ նա ընտրել էր ազգի համար Հայ աշխարհ:
Քանի՛ տարի անկախ մընաց Հայը օտար ազգերից,
Ինչ էր պատճառ, որ նա ընկավ իր առաջվա փառքերից:

Ո՞ր ցըրվեցավ քու խեղճ հայը, ունի՛ այժմ օգնական,
Կամ մի հընար, միջոց կամ հույս նորա կրկին նորոգման.
Դե կա հընար՝ դու պատրամստ ես անձըդ ազգիդ զոհ անել,
Խիստ կըտըտանք, սաստիկ տանջանք, սով ու ծարավ միշտ տանել:

Դու պատրամստ ես թողնել կայքըդ, ծընողք, եղբարք սիրական,
Սիրելվույդ տեղ կըրծքիդ սեղմել միշտ մահառիթ հըրացան.
Դու պատրամստ ես անվախ երթալ թշնամիի սուրի դեմ,
Սարսափելի մահըդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադեմ:

Այդ ժամանակ քեզ հայ կասեմ, ես քեզ սիրով կը գրկեմ,
Թե ջուր ընկնիս՝ ջրից, թե՛ հուր, ես քեզ հուրից կըփրկեմ,
Բայց թե փորըդ տղմաններից կամ փըլավից տըռաքի,
Հավատացի՛ր, ուտելովդ օգուտ չես բերիլ ազգի:

ՀԱՅ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ է հայը, մի՞թե նա է, որ խոսում է հայ լեզվով,
Եվ կամ՝ որի մականունը հանգում է յան մասնիկով,
Որ ուտում է ամենայն օր ճաշին տոլմա ու փըլավ,
Կամ՝ պարծանք միշտ հագնում է հայի գրդակ ու հալավ:
Ո՞վ է հայը, մի՞թե նա է, որ գընում է Հայի ժամ,
Ու տարենը հաղորդվում է խիստ սակավից՝ չորս անգամ,
Որ կյանքումը պաս չի կերել, ծոմ էլ պահում է նույնպես,
Հորանջելիս խաչ է կընքում՝ բաց բերանն ու երես:
Ո՞վ է հայը, մի՞թե նա է, որ տեսնելիս տերտերին
«Օրհնյա ի տեր» պատրաստ ունի ամեն բոպե իր բերնին.
Որի համար մեծ ամոթ է, նաև մեղք է մահացու,
Թե Զատիկի թաթախմանը չուտե թերխաշ կարմիր ձու:
Չէ՛, սիրելի՛ս, ազգությունը չէ արտաքին արարմունք,
Հայ ծընելըդ անգամ չի տալ քեզ հայության իրավունք,
Ով է կամ յան մականունիդ վերջի վանկի մասնիկը,
Կարմիր ձվով կամ թե անձու կատարում ես զատիկը:
Քալլա-փաչա կամ թե բորշ է ամեն օրվա կերածըդ,
Սեռտուկ, պայլտո կամ թե չուխա է վըրայի հագածըդ —
Ողջը մին է. ծեսով չես տալ ազգիդ վընաս կամ օգուտ,
Տեղը մընա ազգությունը, այդ նաև վարձ չէ՛ հոգուդ:
Թե դու հայ ես՝ հայությունդ պիտի հարգես անպատճառ,
Հայաստանը պիտի լինի հուստ աստղը քեզ համար.
Օտարինը դու մի՛ ատիլ, մի՛ էլ սիրիլ կուրորեն,
Բայց քու Հայի օգուտները միշտ վեր դասե ամենեն:
Արվեստ, ուսում, շըքեղարվեստ տարածե՛ հայ ազգի մեջ,
Բայց բըռնությամբ միշտ հեռացուր նորա մեջեն կրոնի վեճ.
Քեզ ի՛նչ շահ է, թե դու կասես՝ հոգին բըխել է Հորից,
Կամ թե Որդին հոգվով սրբով անսերմ ծընունգ է Մորից...
Թո՛ղ, սիրելի՛, այդ խընդիրքը, աչքըդ դարձո՛ւր դեպ հարավ
Բյուր-բյուր հոգիք դու կըտեսնես կորած դորա պատճառավ,
Բայց մինչ այսօր այդ խընդիրքը մընացել է անվըճիռ,
Թույլ խելքովըդ աշխատում ես քակել անքակ այդ կընճիռ:
Միրե՛ ազգըդ ո՛չ լոկ խոսքով, սիրե՛ ինչպես քու անձը,
Նորա օգտին, թե պետք լինի, զոհե՛ բոլոր քու գանձը,
Մի՛ խընայիլ կյանքըդ անգամ, արյունըդ բե՛ր նորան գոհ
Ո՛չ այն հուսով, որ քու ազգը իսկույն լինի քեզնից գոհ:
Իստակ սերը չի՛ պահանջում ամեննին տըրիտուր,
Թե տվածը հետ առնվի՝ դորան կասեն առուտուր,

Բայց վանյ նոցա, որք անըզգա են յուր ազգի վիճակին,
Հազա ր անեծք նոցա վերա, երնեկ շան պես սատակին:
Թե դու հայ ես գիտեն արդոք՝ ո՛վ էր ազգիդ նախահայր,
Ո՛րտեղ, ո՛ր կողմ նա ընտրել էր ազգի համար Հայ աշխարհ:
Քանի՞ տարի անկախ մընաց Հայը օտար ազգերից,
Ինչ էր պատճառ, որ նա ընկավ իր առաջվա փառքերից:
Ո՛ր ցրրվեցավ քու խեղճ հայը, ունի՞ այժմ օգնական,
Կամ մի հընար, միջոց կամ հույս նորա կրկին նորոգման.
Թե կա հընար՝ դու պատրամստ ես անձըզ ազգիդ զոհ անել,
Խիստ կըտըտանք, սաստիկ տանջանք, սով ու ծարավ միշտ տանել:
Դու պատրամստ ես թողնել կայքըդ, ծընողք, եղբարք սիրական,
Սիրելվույդ տեղ կըրծքիդ սեղմել միշտ մահառիթ հըրացան,
Դու պատրամստ ես անվախ երթալ թշնամիի սուրի դեմ,
Սարսափելի մահըդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադեմ:
Այդ ժամանակ քեզ հայ կասեմ, ես քեզ սիրով կը գըրկեմ,
Թե ջուր ընկնիս՝ ջրից, թե՛ հուր, ես քեզ հուրից կըփրկեմ:
Բայց թե փորըդ տոլմաններից կամ փըլավից տըռաքի,
Հավատացի՞ր, ուտելովդ օգուտ չես բերիլ ազգի:

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

Քոնն էղիր, պալաս, աչքըդ խուփ արան,
Նաշխուն աչքերուդ քուն թող գա վըրա,
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:
Օսկի խաչ վըզիդ՝ քեզի պահապան,
Նարոտ կապիլ է ծարեն տեր-պապան.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:
Մավի հիլուններ կախիլ իմ ես ալ,
Նազար չիս առնուլ, քոնն էղիր, մի՛ լալ,
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:
Աս քանի՛ մորըդ անքուն աչքովը
Անցիլ է օրեր օրոցքիդ քովը.
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:
Օրոցքըդ օրրիմ, օրով բոյ քաշիս,
Մըղկըտան ծանով սիրտըս չի մաշիս,
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:
Դուն ալ քոնն էղիր, ինձի ալ քուն տուր,
Սուրբ աստվածամայր (այս անունին) քուն տուր:
Օր-օր-օր, պալաս, օր-օր ու նանի,
Իմ (այս անունին) քունը կը տանի:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԿՐԹԱԾ

ՀԱՅ ԱՂՋԻԿ

Շուշան, շուտով դեմքը Թափե՛, ձյուն դու թվիր մըրոտած.
Տե՛ս, սիգաճեմ ման է գալիս հալ աղջիկը մեր կըրթած.
Վարդի գույնը уж не в моде: то-ли дело бледный лик!
Այստեղումը бледный են դիփ համ աղջկունք, համ կնանիք:
Բն է գաղտնին бледныйության, այդ հայտնի չէ՛ ոչ որին,
Միայն կասեն, որ շատուց է կավիճն ունի բարձր գին:
Առավոտ է, մեր աղջիկը հայլիից չի հեռանում,
Նորա ծընողք այսօր ճաշի Գարձե՛ են ըսպասում,
Գարձե՛ է, լավ միտք արեք, Հայ չէ՛ անշնորհ ու տրգետ,
Գարձե՛ է՝ փայլուն շորով, ուսին դըրած эполет.
Տուն կըմտնի, գըլուխ կըտա այնպէն սիրուն, շնորհաշուք,
Որ մեր կըրթած հայ աղջկա սիրտը կանտе тук-тук-тук!
Էնդուր համար նա հայլիից օրն ի բուն չի պուկ գալի,
Գարձե՛-ին դուր չի գալը խիստ է նորան ըզգալի:
Ո՛չ լոկ դեմքով պիտի դուր գա, այլ և անուշ խոսքերով,
Ինչպէ՛ս, ինչ կերպ, դուք կը հարցնեք, այդ էլ չըզհտե ոչով:
Բարձի տակը պահած ունի նա George Sande-ի ռօման-ը,
Գիշերները սորից թաքուն կարդում է մինչ չորս ժամը.
Անհատական այդ աղբյուրից նա քամում է անդադար
Սիրո զգացմունք, սիրո խոսքեր—կանանց սրտին մըլխիթար:
Նա գըտավ յուր идеал-ը, այսօր ճաշին կըտեսնե
Նա յուր անտես սիրահարին, ում որ սիրտը տվել է:
Հայո՛ց աղջիկ, Հայո՛ց աղջիկ, գնա՛ առաջ, մի՛ վախիլ,
Бледный դեմքդ, շինծու խոսքդ ովի՛ն ասես չեն խաբիլ:
Գարձե՛-ին դուր չես գալի, — ինչ ափսոսանք, ինչ վընաս,
Քեզ սիրահար гусар, улан, артиллерист կունենաս:
Դու փո՛րձ փորձե՛ սորից դուր գալ, անուշ ժպտա՛ ու խոսե՛,
Քըսանմեկըդ արդեն մոտ է, տես, առաջիդ մեծ փոս է:
Բայց մի՛ թողնիլ դու George Sande-ին, идеал-իդ մի՛ ուրանալ.
Թե ոչ ջահիլ, գոնե ծերուկ կառնե քեզ ուս генерал.
Բայց զգուշացի՛ր դու հայերից, գին չեն դնիլ, չեն սիրիլ
Քեզ, ինչպէս դու ցանկանում ես. դու քեզ Հային մի՛ մատնիլ:
Փորձ փորձեցիր ու դուր չեկար ո՛չ улан-ին, гусар-ին,
Քըսանհինգըդ մոտենում է. Հայ աղջիկ, վայ՛ քու հալին:
Հայո՛ց աղջիկ, Հայո՛ց աղջիկ, գնա՛ առաջ, մի՛ վախիլ,
Бледный դեմքդ, սիրուն խոսքդ ովի՛ն ասես չեն խաբիլ:

Տարիներըդ ակոս ձրգեց քու շնորհալի երեսին,—
Վընաս չի կա,— подруг-ներըդ դորա համար ճար ունին.
Երբ որ տանն ես՝ մի՛ հրամայիլ տըղոց քեզի մոտենալ,
Դուրս գնալիս՝ лик-իդ ձրգե՛ դու կըրկնածալ հաստ выаль,
Հարցնողներից ուշի-ուշով ծածկե՛ տարիդ ծընընդյան,
Ու ամենին հավատացո՛ւր, որ տասնութ ես տարեկան:

1863

ԳԻՆԻ ԵՎ ԶՈՒՐ

Երեկ բժիշկ կանչեցի, գլխիս մեկ դեղ խնդրեցի,
Նա ինձ դեղ տալ չուզելով, ասաց մի՛ խմիր գինի,
Արյունս գլխիս տվեց, բերնումս խոսքս սառեց.
Ասի՝ ի՛նչ է պատճառը, որ ինձ գինին պաս դրվեց.
Բժիշկն ասաց, պատվելի, պատճառն այս է իսկ հայտնի,
Որ միշտ գլուխդ կպտտի, երբ էլ որ խմես գինի.
Ասի՝ բժիշկ, դու սուտ ես, դու լավ մարդ չես, բժիշկ չես,
Գինին ինչպե՞ս է կարող գլուխս շրջել անվի պես.
Այն ջուրն է որ անդադար, շարժման մեջ կա դիվաբար,
Գնա ու տես աղորին, ջո՛րն է շարժում, թե գինին:
Եղբայրք, բերեք շուշեքը, լցրեցեք բաժակը,
Խմենք ու առողջանանք, ասենք սուտ է բժիշկը.
Մեզ գինին չի հարբեցնիր, նաև չի հիվանդացնիր,
Խմենք կարմիր նեկտարը, մեզ մարդ հիվանդ չի տեսնիր:

1878

ՀԱՅԵՐՈՒՍ ԹՈՒՔԸ

Դուն խելոք, հաշվով վաճառական ես,
Սյուլք, փող ու ապրանք, կասեն, շատ ունես. –
Բայց թե փողեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, փողիդ ալ վըրան:
Քաջ ես, լըսել ենք, ինքըդ մեծավոր,
Անուն հաղթողի ունես փառավոր.
Բայց թե թըրեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, թըրիդ ալ վըրան:
Ի վերուստ քանքար քեզի տված է,
Հեղինակ անունըդ աշխարհ փըռված է.
Բայց թե գըրչեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, գըրչիդ ալ վըրան:
Հեռատես մըտքով դուն զարդարեցար,
Հըզոր իշխանի սիրելին դարձար.
Բայց թե մըտքեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, մըտքիդ ալ վըրան:
Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կըհորինես թանկագին բաներ.
Բայց թե ձեռքեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վըրան:
Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հըռչակ ու հանձար.
Բայց թե լեզվեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, լեզվիդ ալ վըրան:
Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովըդ լըցված է մարդոց բերան.
Թե ուսումեդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, ուսմանդ ալ վըրան:
Կուտամ քեզ պատիվ, կունենաս դու հարգ,
Ու կըդընես քեզ ազնիվ մարդոց կարգ,
Երբ օրորանեդ մինչի գերեզման
Միակ ձըգտմունքըդ լինի Հայաստան:

ԱՂԱՍՈՒ ՄՈՐ ԵՐԳԸ

Նվեր Խաչատուր Աբովյանի անմահ հիշարարկին

Զարթիր, մանուկ իմ նազելի, բաց այդ պայծառ աչերը,
Թերթերունքեդ քունը թոթվե՛, գիրկը հանգիր քու մորը.
Բավ՛ քեզ որքան բարի հրեշտակը հեքիաթ ասին երագում,
Այժմ արի՛ քեզ այն պատմեմ, ինչ պիտ տեսնես աշխարհում:

Զարթիր, որդյակ, քանի՞ քրնես,
Բաց աչերըդ այդ նախշուն,
Ուր որ մայրըդ յուր բախտ, փառքը,
Կյանք ու արևն է տեսնում:

Դուն կըմեծնաս, բոյ կը քաշես, չինար բոյիդ ես ղուրբան,-
Քեզ ուժ կուտան Մասսի քաջքը, որ դու լինիս քաջ Վարդան.
Իմ մատներով մի ոսկեթել մեջքիդ գոտի եմ կարել,
Գոտիիցըդ թուր կը կապեմ, այն էլ ինքս եմ սրել:

Զարթիր, որդյակ, քանի՞ քրնես,
Բաց աչերըդ այդ նախշուն,
Ուր որ մայրըդ յուր բախտ, փառքը,
Կյանք ու արևն է տեսնում:

Մեր բակումը ձի է կայնած՝ քեզ է մընում անհամբեր,
Զարթիր, որդյակ, քանի՞ քրնես, ան քու թուրը մահաբեր.
Քու Հայ ազգը հեծեծում է, ձեռքը, ոտքը շրդթայած,
Քու եղբարքը գերության մեջ... քայջ, միայն դո՛ւ ես քրնած...

Զարթիր, որդյակ, քանի՞ քրնես,
Բաց աչերըդ այդ նախշուն,
Ուր որ մայրըդ յուր բախտ, փառքը,
Կյանք ու արևն է տեսնում:

Զէ՛, իմ որդին շուտ կըզարթի, ձին կըհեծնե սանձակոծ
Հայի արցունքը կըսրբե, կըդադրացնե լաց ու կոծ.
Հայ եղբայրներ, քիչ էլ կացեք, իմ Աղասին զարթեցավ,
Գոտին կապեց, թուրը կախեց ու իր նըժույգ ձին նըստավ: